ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

20.03.2024 17:25

ՀՀ փաստաբանների պալատի, ՀՀ փաստաբանական ակադեմիայի և «Ժեստ» հոգեբանական կենտրոնի նախաձեռնությամբ Փաստաբանների պալատի դահլիճում կայացավ «**Հոգեբանության ժամանակակից մոտեցումները փաստաբանական գործունեության ոլորտում**» խորագրով կոնֆերանս:

Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Ջոհրաբյանը:

Այնուհետև զեկույցներով հանդես եկան «Ժեստ» հոգեբանական կենտրոնի հիմնադիրներ Արկադի Մեհրաբյանը և Մարիամ Մեհրաբյանը, նույն կենտրոնի գործադիր տնօրեն Լուսինե Գրիգորյանը և կլինիկական հոգեբան Աննա Գրիգորյանը, «Պավլ Մեդ» հոգեկան առողջության կենտրոնի տնօրեն Անի Հովհաննիսյանը, նույն կենտրոնի գլխավոր բժիշկ Լիանա Խաչատրյանը և «Սիգմա Մեդ» բժշկական կենտրոնի բժիշկ-թմրաբան Ասյա Գրիգորյանը:

Կարևորելով փաստաբանության մեջ հոգեբանության ժամանակակից մոտեցումները, քննարկվող թեմաները բազմազան էին, կապված թրաֆիքինգի, աֆեկտի տեսակների, քրեական և քաղաքացիական գործերի շրջանակներում հոգեբանական փորձաքննության կազմակերպման առանձնահատկությունների, անչափահասների հանցավորության վիճակագրության, սոցիալ-հոգեբանական մեխանիզմների, թմրամոլության, դատահոգեբուժական փորձաքննության կազմակերպման առանձնահատկությունների հետ և այլ կարևոր հարցերի շուրջ:

Ներկայացվող թեմաների առնչությամբ փաստաբանների կողմից հնչեցին մի շարք հարցեր, որոնց վերաբերյալ մասնագետները տվեցին բովանդակային և սպառիչ պատասխաններ, միաժամանակ հայտնելով՝ համագործակցության շարունակականությունը պահելու պատրաստակամության մասին:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՃԱՆԱՉԵՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԵՔ
ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })